



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՉԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՁԵՆԱՄԲ ԶԱՅԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՉ

- ԲՐԸՆ. ՆԱՉԱՐԷԹ ՍՐԿ. ԶԻՐԱՉԵԱՆ ԿՈՉՈՒԵՑԱԲ Տ. ՂԵՌՆԴ ԶԱՅԱՆԱՅ

Միացեալ Նահանգներու Արեւմտեան մեր Թեմի տարեգրութեանց մէջ, այս տարուան Քրիստոսի Այլակերպութեան տօնը՝ Կիրակի, 31 Յուլիսը, պիտի արձանագրուի իբրեւ յիշատակելի ու հանգրուանային օր, որովհետեւ այդ օրը մեր հոգեւորականաց դասը նուիրեալ նոր անդամով մը հարստացաւ: Արդարեւ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագի ընթացքին, քահանայ ձեռնադրեց եւ օծեց Լա Քրեսենթա Յովիտի Յայց. Առաքելական եկեղեցւոյ դպրապետ բարեշնորհ Նազարեթ Սրկ. Զիրազեանը, զայն վերանուանելով Տ. Ղեւոնդ Զահանայ:

Նորընծայ քահանային խարտաւիլակներն էին Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան, որոնք Ս. Պատարագի պահուն սպասարկեցին Ս. Սեղանին: Արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ միւս քահանայ հայրերը՝ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան եւ Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան: Կնքահայրութիւնը յանձն առած էր Տոքթ. եւ Տիկին Յովհաննէս եւ Մարինա Տէր Չաքարեան ամուլը: Երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ երգչախումբը, իմբավարութեամբ ծանօթ երաժշտագետ Միքայէլ Աւետիսեանի:

Արարողութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներէն Տիկին Ռիմա Պողոսեան, Տեառք Վահան Պզտիկեան, Կարօ Էշկիեան եւ Կարէն Բենիասեանս, Ս. Աստուածածին եւ Քրեսենթա Յովիտի եկեղեցիներուն հոգաբարձութեանց ու Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

ՁԵՆԱԿՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ

Քահանայական ձեռնադրութեան ու օծման արարողութիւնը տեղի ունեցան Ս. Պատարագի ընթացքին, օրուան ճաշու գիրքի ընթերցումէն առաջ: Այս հանգրուանին երգուեցան «Ուրախ լեր» եւ «Այսօր աստուածութիւնը զուարճանայ» հոգեթով շարականները, որու ընթացքին պատարագիչ եւ ձեռնադրիչ Սրբազանը, խորանին ու ժողովուրդին խնկարկելէ ետք, բազմեցաւ խորանին աջակողմը զետեղուած յատուկ բազկաթոռին վրայ, մինչ սաղմոսասաց երկու քահանայ հայրերու առաջնորդութեամբ ընծայեալը, ծնրադիր խորանին ձախակողմեան աստիճաններէն դէպի խորան յառաջացաւ: Ապա յատուկ աղօթքներու, շարականներու երգեցողութենէն ետք, ընծայեալ Նազարեթ Սարկաւագ ծնրադիր ներկայացաւ Առաջնորդ Սրբազանին առջեւ, որ հարց տուաւ ընկերացող քահանաներուն, թէ արդեօք կը վկայե՞ն, թէ քահանայական կարգի ընդունման ներկայացողը արժանաւոր է ու կրնայ յանձն առել իրեն վստահուելիք քաղցր լուծը, հոգեպէս ու մարմնապէս պատրաստ է ամբասիր ծառայութիւն մատուցելու եկեղեցւոյ ու ժողովուրդին, ըլլալու մշակ առանց ամօթի: Տ. Արտակ Քհնյ., յանուն աղօթակից հոգեւորականներուն, հաստատեց, թէ ան արժանի է այս կոչումին: Այս վկայութիւնը ստանալէ ետք, Առաջնորդ Սրբազանը քահանայութեան հրաւիրեց ուխտեալ թեկնածուն եւ Ս. խաչով եւ իր աջը անոր գլխուն դնելով, աղօթք բարձրացուց առ Աստուած, որ նորընծան օժտէ քահանայական ծառայութեան անհրաժեշտ բոլոր բարեմասնութիւններով ու արժանիքներով, որպէսզի անոր ծառայութիւնը ի սպաս դրուի Աստուծոյ, եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Նորընծան ապա ծնրադիր առաջնորդուեցաւ խորանին կեդրոնը, եւ մինչ կ'երգուէր «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեյոյզ շարականը, նուիրեալը դէմքը արեւմուտք, հատատացեալներուն դարձուցած մնաց ծնրադիր, ձեռքերը գլխուն երկու կողմերը բարձրացուցած, իբր նշան աշխարհէն հրաժարելուն եւ Աստուծոյ ու ժողովուրդին ծառայութեան նուիրուելու ուխտի: Առաջնորդ Սրբազանը, աստուածային շնորհք հայցեց Աստուծմէ, ապա իր ձեռքը հանգչեցնելով ընծայեալի գլխուն, աղօթեց ըսելով. «Ես իմ ձեռքս կը դնեմ ասոր գլխուն վրայ եւ դուք բոլորդ աղօթեցէք, որպէսզի արժանի ըլլայ քահանայական աստիճանը անարատ պահելու, ամբասիր կեանքով ծառայելու Աստուծոյ խորանին, մնայ հաւատարիմ պահապանը իր պատուիրաններուն, սիրէ Չայն ու բարի գործերով իր ծառայութիւնները կատարէ անարատ, նմանի Քրիստոսի Առաքեալներուն ու անոնց պէս դառնայ Ս. Երրորդութեան ու քրիստոնէական հաւատքի տարածիչ»: Ապա Ձեռնադրիչ Սրբազանը, ուրարը ընծայեալի պարանոցի վրայով ձախէն աջ բերելով, «Քրիստոսի լուծը» իր վրան առնելու եւ Քրիստոսի եկեղեցւոյ ընծայաբերուելու աղօթքը կարդաց ըսելով. «Ա՛ն մեր Տեր Յիսուս Քրիստոսի լուծը»:

Այնուհետեւ, կարդացուեցաւ օրուան Աւետարանը եւ արտասանուեցաւ «Ջաւատամքը». ընծայեալը, մինչեւ Ս. Պատարագի «Ողջոյն»ի բաժինը, ձեռնամած կանգնեցաւ Ս. Խորանին ձախակողմը:

«Ողջոյնէ» առաջ, աղօթակից հոգեւոր հայրերը դարձեալ Առաջնորդ Սրբազանին առջեւ առաջնորդեցին ձեռնադրեալը, որ ծնրադիր, Առաջնորդ Սրբազանին ձեռամբ ստացաւ քահանայական փիլոնը, սաղաւարտը, գօտին ու շուրջառը: Սրբազանը նաեւ օրհնեց պատարագի մնացեալ զգեստները, ապա զանոնք զետեղեց ձեռնադրել քահանային ուսերուն, մէջքին եւ գլխուն:

Մինչ ծանր եղանակով կ'երգուէր «խորհուրդ խորին» շարականը, նորընծան անցաւ խորանին ետին, առաջին անգամ պատարագի զգեստով զգեստաւորուելու: Իսկ բուրվառով, մոմակալներու եւ քնոցակիրներու առաջնորդութեամբ միւռոնաթափ աղանին հոգեգալստեան «Կենդանարար Աստուած» շարականի երգեցողութեամբ հանդիսաւորապէս խորան բերուեցաւ ու յանձնուեցաւ Ձեռնադրիչ Սրբազանին, երբ ընծայեալը, քահանայական ամբողջական զգեստաւորումով կանգնեցաւ խորանին ձախակողմը, սպասելով ամենէն սրտառուչ ու խորհրդաւոր օծման արարողութեան:

Սրբազանին շրթներէն հնչեցին »Առաքելոյ Աղանոյ« շարականին բառերը, որուն ընկերացան եկեղեցական հայրեր, իսկ դպրաց դասի »Ամեն ալելուիա, ալելուիա« երգէն ետք, Առաջնորդ Սրբազանը Ս. Միւռնով օծեց նորընծայ քահանային ճակատն ու երկու ձեռքերը, զայն վերանուանելով Տէր Ղեւոնդ Քահանայ: Ապա, զայն հրաւիրեց տալու առաջին օրհնութիւնը: Ձեռնադրիչ Սրբազանը վերջին աղօթքով, նորօծ Տ. Ղեւոնդ Քահանային յանձնեց սկիին ու մաղգման, սուրբ Հոգիի իշխանութեամբ սուրբ պատարագ մատուցանելու:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Արարողութեան աւարտին իր պատգամը ուղղելով, Առաջնորդ Սրբազանը նախ եւ առաջ հակիրճ կերպով բացատրեց արարողութեան ընթացքին բարձրացուած աղօթքներուն իմաստն ու նպատակը, նշելով, որ նորընծայ քահանային համար խնդրանք բարձրացուած էր առ Աստուած, որպէսզի զայն օծտէ հոգեկան ամրութեամբ, վերածէ Աստուծոյ խօսքերուն ու պատուիրաններուն սերմնացանին, որպէսզի ան իր հաւատքին մէջ մնայ ամուր, Աստուծոյ հանդէպ ծառայութիւնը կատարէ սիրով ու հաւատարմութեամբ:

Առաջնորդ Սրբազանը նախ անդրադարձաւ ձեռնադրութեան այս արարողութեան Զրիստոսի Այլակերպութեան տօնին զուգահիստեան, ու յայտնեց, թէ իր ծառայական կեանքին մէջ արձանագրուած են քանի մը ուշագրաւ ու խորհրդաւոր զուգահիստեաններ: Ան յայտնեց, թէ 35 տարի առաջ, երանաշնորհ Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսի ձեռամբ կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր ու ճիշդ 35 տարի առաջ այս օրը իր անդրանիկ պատարագը կը մատուցանէր. Աստուած ահա շնորհը ընծայեց իրեն, որ քահանայական ձեռնադրութիւն կատարէ նոյն օրը, եւ ճիշդ այդ պատճառով, ու ի յիշատակ իր ձեռնադրիչ սրբազանին, նորընծան կոչեց Տ. Ղեւոնդ Քահանայ: Նման զուգահիստեան մը արձանագրուած է նաեւ 10 տարի առաջ, երբ Անթիլիասի Մայր Տաճարի խորանին վրայ սարկաւազական ձեռնադրութիւն կատարած է 24 Մայիս 2001ին, որմէ ճիշդ

25 տարի առաջ, նոյն օրը, նոյն խորանին վրայ ինք սարկաւագական ձեռնադրութիւն ստացած էր: Իսկ երրորդ զուգադիպութիւն մը արձանագրուած է 2 Օգոստոս 1987ին, երբ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, Թեմիս նախկին Առաջնորդին՝ Տ. Տաթեւ Սրբազանին ձեռամբ ձեռնադրուած է Ծայրագոյն Վարդապետ, եւ ապա, 10 տարիներ ետք, նոյն օրը, իբրեւ նորոժ եպիսկոպոս, իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագը մատուցած է նոյն խորանին վրայ: Ան երախտագիտութիւն յայտնեց Աստուծոյ, իր նախախնամութեան համար, որ զինք արժանի ըրած է նման ծառայութիւններու, նշելով, որ եկեղեցականի իր ուխտով ծառայած է 35 տարի, որուն վերջին 15 տարիները բոլորած է իբրեւ մեր Թեմին Առաջնորդը:

Խօսելով նորընծայ քահանային մասին, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ ան քահանայի գաւակ է, Բերիոյ Թեմին բազմամեայ սպասարկու եւ այժմ վախճանեալ Տ. Գարեգին Ա. Քահանային գաւակը: Ան անցեալ տասնամեակներուն, եղած է բժիշկ, դարմանելով մարդոց մարմինները, իսկ այժմ, իբրեւ քահանայ, կը կոչուի դարմանելու մարդոց հոգիները: Եղած է խմբավար ու դպրապետ, տոգորուած է մեր եկեղեցւոյ գիտելիքներով ու Սրբազան Յայրերու հոգեւոր ժառանգութեամբ, իսկ այսուհետեւ, այդ արժանիքները ի գործ դնելու կոչուած է իբրեւ ընտիր մշակ: Ան յայտնեց, թէ Տ. Ղեւոնդ Քահանայ քառասնօրեայ իր պահեցողութեան շրջանը պիտի բոլորէ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, ապա պիտի կոչուի Զրեսենթա Յովիտի Յայց. Առաքելական եկեղեցւոյ Յոգեւոր Յովիտի առաքելութեան:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով բարձր գնահատեց Զրեսենթա Յովիտի մեր եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Տ. Արտակ Քահանայի, հոգաբարձութեան ու անոնց կողքին գործող բոլոր միաւորներուն ծառայութիւնը, ինչպէս նաեւ շնորհակալութեան խօսք ուղղեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն, ժողովականութեան ու ծառայողներուն, որոնք հիւրընկալած էին այս արարողութիւնը: Ան նշեց, որ Զրեսենթա Յովիտի եկեղեցին այսպէսով պիտի ունենայ իր ծխատեր քահանան, ու մաղթեց, որ ծխական այս շրջանը ի մօտոյ իրականացնէ նաեւ սեփական եկեղեցի ունենալու իր երազը:

Գնահատանքի ու շնորհաւորանքի խօսք ուղղեց նաեւ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վարդապետին, որ ստանձնած էր խարտաւիլակութիւնը ու հետեւած՝ նորընծայ քահանային պատրաստութեան աշխատանքներուն:

Անդրադառնալով տօնական օրուան խորհուրդին, ու հակիրճ կերպով պատմելով Թափօր լերան վրայ Զրիստոսի այլակերպութեան դրուագը, Առաջնորդ Սրբազանը իր պատգամը եզրափակեց մաղթելով, որ նորընծայ քահանան եւս, քահանայական կոչում ստանալով, զգենու փայլուն դէմք ու անոր ծառայութիւնները ըլլան Զրիստոսի պատգամներուն եւ ուղիին համապատասխան:

Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը շնորհաւորանքի ու բարեմաղթութեան խօսք ուղղեց Զիրագեան ընտանիքին, հարազատներուն եւ կնքահայր ամուլին: Ան նաեւ յոյս յայտնեց, որ մեր Թեմի հոգեւորականաց դասը ստուարանայ նոր հոգեւորականներով, մանաւանդ, որ հոգեւոր ծառայութեան համար նոր մշակներ կը պատրաստուին:

ԱԶԱՅԱՄՐՅՐ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Այնուհետև, Ս. Պատարագը շարունակուեցաւ ու երբ երգուեցաւ «Ողջոյն տուք միմեանց» շարականը, ձեռնադրիչ Սրբազանը եւ հոգեւորականներ կարգաւ, Զրիստոսի սիրով առաջին ողջոյնը ստացան իրենց կրտսեր հոգեւոր եղբօրմէն: Այնուհետև, նորընծայ քահանան՝ Տ. Ղեւոնդ, կանգնած մնաց պատարագիչ Սրբազան Զօր կողքին ու դարձաւ աղօթակից Սուրբ Պատարագի ընծայման:

Ս. Պատարագի արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը թափօրով եւ «Ուրախ լեր» շարականին երգեցողութեամբ առաջնորդուեցաւ եկեղեցին դուրս, իսկ ներկայ հաւատացեալները հրաւիրուեցան համբուրելու նորօծ քահանային աջը եւ ստանալու անոր անդրանիկ օրհնութիւնները: Երգչախումբը հնչեցուց «Կիլիկիա»ն, որուն միացաւ ներկայ հաւատացեալներու բազմութիւնը:

Արարողութեան աւարտին, կնքհաօր աջակցութեամբ տեղի ունեցաւ նորընծայ քահանայ հօր լուսցումի արարողութիւնը:

Աւելի ուշ, յետմիջօրէին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին ու կազմակերպութեամբ Զրեսենթա Զովիտի Զայց. Առաքելական եկեղեցւոյ հոգաբարձութեան, տեղի ունեցաւ պատշաճ հիւրընկալութիւն մը, ի պատիւ Տ. Ղեւոնդ Զահանայի: Զիւրընկալն էր Տոքթ. Ալպեր Գարամանուկեան: Ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արժ. Տ. Արտակ Զիւնյ. Տեմիրճեան, Ազգ. Վարչութեան անդամներ՝ Տեարք Կարօ Էշկիեան եւ Կարէն Բենիասեանս, եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ ու ազգ. երեսփոխաններ, շրջանի միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, նորընծայ քահանայի հարազատներն ու բարեկամները:

Արտասանուեցան յաւուր պատշաճի ու շնորհաւորանքի խօսքեր: Կիրարկուեցաւ գեղարուեստական սեղմ յայտագիր մը: Ընդունելութենէն ետք, Տ. Ղեւոնդ Զահանայ անցաւ իր առանձնարանը, ուր պիտի բոլորէ քառասնօրեայ պահեցողութեան ու խոկումի շրջանը: Ան այնուհետև իբրեւ հոգեւոր հովիւ՝ ծառայութեան պիտի կոչուի Զրեսենթա Զովիտի Զայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ:

Նշենք նաեւ, որ Ուրբաթ, 29 Յուլիսի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած էր բարեշնորհ Նազարէթ Սարկաւազի քահանայական կոչման արարողութիւնը, զոր կատարեց Առաջնորդ Սրբազանը:

ORDINATION OF A PRIEST WITHIN THE WESTERN PRELACY

- DEACON NAZARETH KIRAZIAN RENAMED REV. FR. GHEVONT

Sunday, July 31, 2011 will be remembered as a particularly joyous day within the Western Prelacy for on that day, the Feast of the Transfiguration of

our Lord Jesus Christ was celebrated in all Churches and the Prelacy was blessed with a new priest.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale, during which he ordained Deacon Nazareth Kirazian into the priesthood, renaming him Rev. Fr. Ghevont. Deacon Nazareth Kirazian was previously the choir director at the Crescenta Valley Parish and will serve as the Parish Pastor. His ordination Godfather was Dr. and Mrs. Hovhannes and Marina Der Zakarian.

Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Fr. Ardak Demirjian assisted at the altar and in the ordination ceremony. Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian also participated in the Divine Liturgy.

Among the hundreds of faithful in attendance were Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and members Mr. Vahan Bezdikian, Mr. Garo Eshgjan, Mr. Kahren Beniasians, Delegates and Board of Trustees of St. Mary's Church and the Crescenta Valley Parish.

The ordination was conducted in accordance with the rites of the Armenian Apostolic Church established by our Church Fathers before the day's Gospel reading.

Deacon Nazareth, on bended knee and surrounded by priests who were reciting Psalms, was led up to the left side of the altar. Once on the altar, the Prelate asked the assisting clergy members if the priesthood candidate is ready spiritually, physically, and mentally to take on the mighty responsibilities that would be entrusted to him and to serve his church and people ably. On behalf of the clergy, Rev. Fr. Ardak Demirjian attested that Deacon Nazareth was worthy to be ordained into the priesthood. The assisting clergy led him on his knees before the Prelate, who laid his hands upon the Deacon's head and prayed for Almighty God to grace him with the necessary virtues to become a good servant of the Lord and our church.

As the choir sang "The Divine and Heavenly Grace" hymn, Deacon Nazareth was led kneeling to the center of the altar where he turned westward and presented himself to the people by facing them and raised his hands to the side of his head in a gesture of renunciation of worldly values and humble assent to serve the people. Turning eastward he faced the Prelate, who placed his right hand on his head and prayed that he may be worthy to perform with holiness the duties of the priesthood before the holy altar of our Lord. The Prelate took the deacon's stole from the candidate's left shoulder and placed it behind his neck over both shoulders in the form of a priest's stole and prayed, "Take the yoke of our Lord Jesus Christ. For His yoke is easy and His burden is light" (Matthew 11:30).

Before the "Kiss of Peace", Deacon Nazareth again knelt before the Prelate to receive his priestly vestments. One by one, the Prelate blessed the cope, crown, and belt, and placed them on his shoulder, head, and waist. As the curtain closed and the choir sang the "Profound Mystery" hymn, the candidate was taken to the vestry where he was fully vested for the celebration of the Divine Liturgy. Meanwhile, with the singing of hymns and prayers for the

occasion, clergy members raised the ornamental dove filled with Holy Muron to the altar.

When he was fully vested he was led to the altar for his anointment. The Prelate anointed the forehead and hands of the newly ordained priest and renamed him Rev. Fr. Ghevont, then handed to him the chalice and the plate on which the Eucharist bread is placed.

Following the ordination ceremony, the Prelate delivered his message. He first explained the meaning behind the prayers during the ordination, stating that the prayers offered were for the Lord to fortify the new priest spiritually and keep him firm in his faith so that he can serve our Lord with love and devotion.

Second, the Prelate explained why he renamed Deacon Nazareth Fr. Ghevont and reflected on a number of correlations. He stated that 35 years before, he was ordained a celibate priest by Archbishop Ghevont of blessed memory, and exactly 35 years ago to the day, he celebrated his first Divine Liturgy. Thus, he gave the name Ghevont to Deacon Nazareth in memory of the late Archbishop and in honor of this anniversary. He also noted that 10 years ago on May 24th, 2001 he had ordained deacons on the altar of the Mother Cathedral in Antelias and exactly 25 years to the day before that, he himself was ordained a deacon on that same altar. And on August 2nd, 1987, when he was Pastor of Forty Martyrs Church in Orange County, he was ordained a *Dzayrakooyñ Vartabed* by then Prelate Archbishop Datev Sarkissian and ten years later on the exact same day he celebrated his first Divine Liturgy as a Bishop on that same altar. He expressed his gratitude to God for granting him 35 years of service thus far, 15 of which have been as Prelate of the Western Prelacy.

Speaking of the new priest, the Prelate noted that he is the son of a priest, the late Rev. Fr. Karekin Kirazian who served the Aleppo Diocese for many years. He was formerly a doctor healing the bodies of his patients, and now as a priest he will heal their souls, said the Prelate. He has been a choir leader and has vast knowledge of our church history and tenets. The Prelate informed the faithful that Fr. Ghevont will complete his 40 days of solitude at the Prelacy, after which he will be appointed to lead the Crescenta Valley Parish as Pastor.

The Prelate highly commended the current Pastor of the Crescenta Valley Parish Rev. Fr. Ardak Demirjian, Delegates, and Board of Trustees for their service, and thanked the Pastors and members of St. Mary's Church for hosting this ordination. Noting that the Parish now has its own Pastor, the Prelate expressed his wish that the Parish will soon have its own Church as well.

Very Rev. Fr. Muron Aznikian was also commended for his part in the ordination ceremony and preparation of the candidate.

Referencing the day's Feast, the Prelate gave an account of what transpired on Mount Tabor during the Transfiguration of our Lord, and concluded his message by wishing that Fr. Ghevont is transformed by his ordination as a priest and serves according to the teachings of our Lord Savior Jesus Christ.

In conclusion, the Prelate congratulated the Kirazian family, friends, and the Godfather and extended his best wishes to them, and also expressed hope that the Prelacy will be blessed with even more new priests.

The Liturgy continued with the "Kiss of Peace" as the newly ordained Fr. Ghevont gave his first blessing.

At the conclusion of Divine Liturgy, with the singing of the "Oorakh Ler" hymn the Prelate was led out of the church in a procession, while the faithful came forward to greet the new priest and kiss his freshly-anointed hands. With his Godfather by his side, the washing of the new priest's hands took place, thus concluding the ceremony.

In the afternoon, a luncheon organized by the Crescenta Valley Parish Board of Trustees was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghzarian" Hall in honor of the newly ordained Fr. Ghevont. The luncheon was held under the auspices of the Prelate and hosted by Dr. Alber Karamanoukian. Among the guests in attendance were Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Fr. Ardak Demirjian, Executive Council members Mr. Garo Eshgian and Mr. Kahren Beniasians, Crescenta Valley Parish Delegates and Board of Trustees members, representatives of local sister organizations, and friends.

Congratulatory remarks were delivered and a cultural program was also part of the festivities. After the reception, Fr. Ghevont retreated to begin his 40 days of solitude and reflection, after which he will begin his service as Pastor of the Crescenta Valley Parish.

On the evening of Friday, July 29th, the Prelate conducted the service of the calling into the priesthood at St. Mary's Church.